ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1104-Ա « 27 » փետրվարի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ
ԼԱՏՎԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻԳԱ ԵՎ ԵԼԳԱՎԱ ՔԱՂԱՔՆԵՐ
ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով աշխատանքային օրենսգրքի 209-րդ հոդվածով և հիմք ընդունելով «ԿԵՐԽԵՐ» Արևելյան Եվրոպայի ռեգիոնալ նախագահ Լ. Սեղլարի հրավերը, քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանի №Ն/10553-26 գրությունը՝ «ԿԵՐԽԵՐ» նոր արտադրամասի արտադրման պայմաններին և սպասարկման կենտրոնի աշխատանքին ծանոթանալու ու աշխատանքային քննարկումներ իրականացնելու նպատակով.

1.Երևանի քաղաքապետարանի պատվիրակությանը՝ 2026 թվականի մարտի 9-ից 12-ը ներառյալ, գործուղել Լատվիայի Հանրապետության Ռիգա և Ելգավա քաղաքներ հետևյալ կազմով.

Պետրոս Պետոյան	Երևանի Կենտրոն վարչական շրջանի ղեկավար
Հայկ Երգենյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ
Սաշա Կատվալյան	«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն
Գայանե Աղաբեկյան	Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ

2.Ընդունել ի գիտություն, որ գործուղման հետ կապված բոլոր ծախսերը հոգում է հրավիրող կողմը՝ բացառությամբ օրապահիկի, որը Հայկ Երգենյանի և Գայանե Աղաբեկյանի համար կվճարվի Երևան քաղաքի 2026 թվականի բյուջեի միջոցներից, Պետրոս Պետոյանի օրապահիկը կվճարվի Կենտրոն վարչական շրջանի 2026 թվականի բյուջեի միջոցներից, իսկ Սաշա Կատվալյանի օրապահիկը կվճարվի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի 2026 թվականի բյուջեի միջոցներից:

3.Կենտրոն վարչական շրջանի ղեկավար Պետրոս Պետոյանի բացակայության ընթացքում վարչական շրջանի ղեկավարի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչական շրջանի ղեկավարի տեղակալ Արթուր Ջուլիակյանին:

4.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալ Հայկ Երգենյանի բացակայության ընթացքում աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության պետի տեղակալի պարտականությունների կատարումը վերապահել նույն վարչության պետ Արսեն Կարոյանին:

5.«Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի տնօրեն Սաշա Կատվալյանի բացակայության ընթացքում տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն հիմնարկի տնօրենի տեղակալ Անդրանիկ Ավետիսյանին:

6.Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Աղաբեկյանի բացակայության ընթացքում աշխատակազմի կոմունալ տնտեսության վարչության աղբահանության և սանմաքրման բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունների կատարումը վերապահել նույն բաժնի գլխավոր մասնագետ Վահրամ Մարգարյանին:

7.Գործուղումից վերադառնալուց հետո, 3 աշխատանքային օրվա ընթացքում, փաստացի կատարված ծախսերի հաշվետվությունը և դրանք հավաստող փաստաթղթերը ներկայացնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչություն:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ